

ՄԱԳԱՂԱԹԻ ՎՐԱՅ ՀԱՅ ԶԵՌԱԳԻՐ ԳՐՔԵՐՈՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ

Գրեց՝ ԱՐՇԱԿ ՖԻԹՎԱՃԵԱՆ

Այս յօդուածը խտացումն է այն երեք խիստ շահեկան դասախօսութեանց, գոր յայտնի նկարիչ պ. Արշակ Ֆեթվանեան կարդաց այս տարի Նիւ Եորքի մէջ: Յօդուածը սրբագրուած է հեղինակին կողմէ:

Այս երեկոյ այստեղ դալով ինձ պատիւ ընողները կը սպասէք, որ ես խօսիմ հայ գրքի եւ անոր գրչութեան արուեստին մասին, ինչպէս որ խոստացած եմ իմ յայտարարութիւնով:

Նախքան բուն նիւթիս անցնելը՝ անտեղի չպիտի ըլլար, որ քանի մը խօսք ընէի գիրք ըսուած բանին բաղկացուցիչը եղող ամենակարեւոր տարրին՝ գրի մասին

Երկրագունդիս վրայ մարդս մարդ ըլլալու աստիճանին հասած օրէն ի վեր իր միտքը արտայայտելու համար 3 միջոցներու դիմած է.

- 1) Նշանացի խօսակցութիւնը (ինչպէս օրինակ՝ խուլ-համբները, որոնք կը բացատրուին մարմնի այս կամ այն մասը զանազան ձեւերով չարժման մէջ դնելով).
- 2) Պատկերներով խօսակցութիւն, որ կը կազմուի հարթ յատակի մը վրայ (հին եգիպտացիք եւ ամերիկեան հնգիկներ).
- Եւ 3) Տառերով խօսակցութիւնը, այսինքն՝ գրաւոր խօսակցութիւնը, որուն մասին պիտի գրուցեմ այսօր:

Լեզուն չարայարուած հնչիւններու արտասանութեամբ մեզ կը յարաբերեցնէ մեր նմաններու հետ:

Գիրքը հնչիւններու տեսանելի պատկերներն են, որոնք քովէ քով դասաւորուելով կը կազմեն բառը, իսկ բառերը քով քովի գալով կը կազմեն խօսքը, որ մեր խորհողութեան մարմնացումն է:

Մտքէ միտք յարաբերելու այս հանճարեղ

գիւտը՝ գիրը բազմազար տարիներէ ի վեր ծանօթ է եւ զործածուեր է երկրիս վրայ: Գրի չնորհիւ է, որ մեր խոհերը, դատումները եւ զնահատութիւնները կը յաւերժացնենք: Գրի չնորհիւ է, որ մեզ հետ կը խօսին բազմազար տարիներ առաջ մեռած մարդիկ: Գրի չընորհիւ է որ կեանքը երկրագունդիս վրայ կը լինի մշտապէս կենդանի:

Գիրը, ուրեմն, գծագրուած արտասանութիւն է. անով է որ կ'անմահանայ բերանացի բարբառին չի կրցած ըրածը: Ուստի ճշմարիտ է եթէ ըսենք, որ աշխարհիս բոլոր բերանացի աւանդութիւնները չարժեմ մէկ գրուած խօսք:

Պզտոն, որ մարդու խորհողութեան առջեւ դրած է բոլոր ժամանակներու խելօքներէն աւելի մեծ թիւով իմաստասիրելի հարցեր, խորապէս սքանչացած մարդկային հանճարի այս ստեղծագործութեան հանդէպ (որ անտարակոյս միակ անհատի մը — թէկուզ զերբնական — կարողութենէն վեր գործ է) առաջարկած է որ գիրը գտնող հանճարեղ մարդը համարեն աստուած կամ առնուազն աստուածապատիւ մարդ:

Մտաւորական մարդկութեան սանտխամատի վերին աստիճանին վրայ կեցող Պզտոնին նման՝ սանտխամատի ստորոտը դեռ յամեցող վայրենին ալ, դրերով պատկերացուած մտքին ինչպէս լինելը չի կրնալով մեկնել ինքն իրեն, զարմացմամբ ըսած է՝ խօսող քուրք*):

* * *

*) Գրերու հնճարի մի օրէն ի վեր մարդոց կողմէ ստեղծուած այլեւայլ ձեւերու եւ եղանակներու մասին կան բազմաթիւ աշխատութիւններ: Անշուշտ հետաքրքրական է ձեզ համար, թէ զանազան ազգեր մտաւոր գործունէութեան այս մարդին մէջ ինչ հանգրուաններէ անցած են: Այս մասին հայերէն լեզուով գոյութիւն ունեցող հեղինակներէն կը յանճարաբեմ ձեզ գիտնական Հ. Ղ. Ինճիճեանի, ուսուցչապետեր Մ. Էմինի, Բ. Պատկանեանի, Գ. Պալաթեանի եւ Իսահակ Յարութիւնեանի երկասիրութիւնները: